

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության մշակութային ժառանգության պահպանության և հանրահռչակման բաժնի գլխավոր մասնագետներ Արմեն Սարգսյանի և Տաթևիկ Սուքիասյանի՝ 2022 թվականի հոկտեմբերի 18-24-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (Մայնի Ֆրանկֆուրտ)՝ գրքի միջազգային ցուցահանդեսին մասնակցելու նպատակով գործուղման արդյունքների մասին

1. Գործուղված անձինք

*Արմեն Սարգսյան
Տաթևիկ Սուքիասյան*

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության մշակութային ժառանգության պահպանության և հանրահռչակման բաժնի գլխավոր մասնագետներ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, Մայնի Ֆրանկֆուրտ, հոկտեմբերի 18-24, 2022

4. Հրավիրող կողմը

Ֆրանկֆուրտի գրքի միջազգային ցուցահանդես

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության մշակութային ժառանգության պահպանության և հանրահռչակման բաժնի գլխավոր մասնագետներ Արմեն Սարգսյանի և Տաթևիկ Սուքիասյանը գործուղվել են ԳԴՀ՝ Ֆրանկֆուրտի գրքի միջազգային ցուցահանդեսում Հայաստանի ազգային տաղավարը ներկայացնելու, աշխատանքները համակարգելու, «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագիրը ներկայացնելու նպատակով:

6. Քննարկված թեմաները

Տեղի են ունեցել արտասահմանյան և հայ հրատարակիչների և գրական գործակալների միջև հանդիպումներ՝ հայ գրականությունը արտերկրում թարգմանաբար հրատարակելու նպատակով, ինչպես նաև այլ լեզուներից հայերեն թարգմանությունների պայմանավորվածություններ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում (ԳԴՀ) հոկտեմբերի 19-23 տեղի ունեցավ Ֆրանկֆուրտի 74-րդ գրքի ամենամյա ցուցահանդես-տոնավաճառը:

Այն համախմբում է ամբողջ աշխարհի գրական համայնքներին, ընթերցողներին, պեդագոգներին, կառույցներին, հրատարակչություններին, գրական գործակալություններին, թարգմանիչներին, մասնավոր այլ ընկերությունների, մեդիա մասնագետների՝ առաջարկելով համագործակցության և հաղորդակցության ֆունկցիոնալ կարևորագույն պլատֆորմ: Ֆրանկֆուրտի գրքի միջազգային ցուցահանդեսին մասնակցում էին 95 երկրներից 4000 ցուցադրողներ, 93000 ոլորտային մասնագետներ, 87000 այցելուներ, 6400 լրագրողներ և մեդիայի ոլորտի ներկայացուցիչներ:

Գրքերը և ծրագրերը ներկայացված էին ազգային և անհատական տաղավարներով, այդ թվում՝ քննարկում-միջոցառումներով, ցուցադրություններով և փերֆորմանսներով: Ֆրանկֆուրտն այս օրերին համարվում է աշխարհի գրքասերների հանդիպման վայր, որտեղ հարաբերվում են ազգային մշակույթները, արժեքային համակարգերը, աշխարհաքաղաքական բախումների վերաբերյալ երկխոսություն-քննարկումները, քաղաքակրթությունները, գրավոր ժառանգությունները, չորրորդ իշխանությունը:

Հայաստանը ևս առանձին տաղավարով մասնակցեց Ֆրանկֆուրտի գրքի միջազգային ցուցահանդեսին: Մեր տաղավարն այս տարի նվիրված էր Եղիշե Չարենցի ծննդյան 125-ամյակին: Ֆրանկֆուրտի՝ աշխարհի ամենահեղինակավոր և ծավալով ամենամեծ ցուցահանդեսին Հայաստանը մասնակցում է քսան տարուց ավելի: Ցուցահանդեսում ներկայացվեցին վերջին տարիներին Հայաստանում և արտերկրում հրատարակված օտարալեզու հայ գրականություն, ինչպես նաև համագործակցային մի շարք ծրագրեր: Ֆրանկֆուրտի գրքի միջազգային ցուցահանդեսում ազգային տաղավար ունենալու նպատակն է, որ հայաստանյան գրական գործակալները և հրատարակիչները կարողանան իրենց հանդիպումներն ազատորեն անցկացնել մեր տաղավարում, ներկայացնել իրենց հրատարակությունները, գրողներին, գնել և վաճառել ստեղծագործությունների գույքային իրավունքներ:

Ֆրանկֆուրտի հայկական տաղավարում, ինչպես նաև մյուս ազգային տաղավարների և օտարերկրյա հրատարակչությունների ներկայացուցիչներին ներկայացվեց «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագիրը, որով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն աջակցում է արտերկրի այն հրատարակչություններին, որոնք ցանկանում են իրենց երկրում օտար լեզվով հրատարակել հայ դասական և ժամա-նակակից գրականություն: Ծրագրի նպատակը հայ գրականությունը մեր երկրի սահմաններից դուրս հայտնի դարձնելն է: Այն նպաստում է նաև մեր մշակույթի և երկրի ճանաչելիության մակարդակի բարձրացմանը: «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագրի աջակցությամբ վերջին 4 տարում արտերկրում լույս է տեսել (և ընթացքում է) 67 գիրք 20-ից ավելի լեզուներով:

Ֆրանկֆուրտի գրքի միջազգային ցուցահանդեսին Հայաստանի մասնակցության նպատակներ են՝ գրատարածման բնագավառում միջազգային համագործակցություն, հայ գրականության հանրահռչակում արտերկրում, գրական դաշտի բոլոր օղակների զարգացում, գրական արտադրանքի միջոցով գրական-մշակութային ժառանգության պահպանում, զարգացում և տարածում, հասարակության ստեղծագործական ներուժի վերարտադրման և զարգացման համար պայմանների ստեղծում:

Հայկական պատվիրակության կազմում Ֆրանկֆուրտում էին «Արի», «Առաջին» գրական գործակալությունները, «Անտարես», «Բուկինիստ», «Նյումեգ», «ԵՊՀ», «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին», «Վերնատուն» հրատարակչությունները, «Ջանգակ» գրատունը: Ցուցահանդեսում Հայաստանի ազգային տաղավարի հասցեն էր՝ հոլ 4.0, տաղավար C 90:

Ֆրանկֆուրտի գրքի միջազգային ցուցահանդեսը համարվում է համաշխարհային գրականության ինտերգրացիոն կենտրոն, որտեղ գրքերը, հեղինակներն ու ընթերցողները կենդանի շփման հնարավորություն ունեն: Պատահական չէ, որ գրքի տոնավաճառի բացման արարողությունից սկսած մինչև համաժողովներն ու փերֆորմանսները բարձրաստիճան պաշտոնյաներն ու ինտելեկտուալները ուղերձներ են հղում աշխարհաքաղաքական ճգնաժամի լուծումների և խաղաղության մասին:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության նախագահ Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերի խոսքով՝ գրքի տոնավաճառը ոչ միայն մշակութային, այլ նաև սոցիալական, քաղաքական իրադարձություն է ինչպես Գերմանիայի, այնպես էլ միջազգային հանրության համար: «Այստեղ ոչ միայն կնքվում են պայմանագրեր, քննարկվում արտոնագրերի տրամադրում, այլ հանդիպում են հեղինակները, հրատարակչությունները, գործակալները, լրագրողները, ընթերցողները բոլոր երկրներից, այստեղ հանդիպում են մշակույթները: Գրքի տոնավաճառում ստեղծվում են միջազգային հարաբերություններ, և տոնավաճառի այցելուները քաջատեղյակ են, որ համաշխարհային գրականությունը արստրակտ միտք չէ, այն ապրված իրականություն է», - գրքի տոնավաճառի բացման արարողության ելույթում ասաց Շտայնմայերը:

Թեև գրքի տոնավաճառն ինքնին գրահրատարակչական, ինչպես նաև կոմերցիոն բնույթի խոշոր միջոցառում է, այնուամենայնիվ իբրև գլոբալ հաղորդակցության եզակի մոդել այն նաև անուղղակի ամրագրում է աշխարհաքաղաքական հիերարխիայի մոդիֆիկացիան՝ մխրձվելով խոսքի ազատության նկատմամբ ոտնձգություններ իրականացնող, գրաքննության, արգելված գրականության ավանդույթ ունեցող ռեպրեսիվ երկրների թեժ կետեր:

Գերմանիայի Հեսեն երկրամասի վարչապետ Բորիս Ռայնն ասաց, որ գրքի տոնավաճառն անշուշտ հարթակ է գրքի վաճառքի, պայմանագրերի կնքման, հեղինակային, մտավոր սեփականության իրավունքների վերաբերյալ բանակցությունների ու համագործակցության, բայց ինքն իբրև ընթերցող կարևորում է տոնավաճառի բովանդակային մարտավարությունը, որն է՝ սպառողների շրջանում ինտելեկտուալ աշխատանքն արժևորելու, դրա համար գին սահմանելու գիտակցության արմատավորումը: Այն ոչ այնքան տնտեսական նշանակություն ունի, որքան ինտելեկտուալ, մշակութային, ինստիտուցիոնալ:

Այս տարի տոնավաճառի պատվավոր հյուր երկիրն Իսպանիան էր (նախկինում այդ ցանկում էին Կանադան, Նորվեգիան, Վրաստանը, Ֆրանսիան, Հոլանդիան, Ինդոնեզիան և այլ երկրներ), իսկ թեման՝ թարգմանությունը՝ «Թարգմանի՛ր, փոխանցի՛ր, փոխակերպի՛ր» խորագրով:

Ֆրանկֆուրտի քաղաքապետ Նորգես Էսկանդարի-Գոյունբերգի համոզմամբ՝ թարգմանությունը մարդու մտածողիզոնը էպես մեծացնում է, քանի որ այն ոչ միայն լեզուն, խոսքը փոխանցելու անհավանական ռեսուրս է, այլև մշակույթի, արժեքների, էմոցիաների թարգմանություն: Ընթերցողն ընկալում է բոլորովին այլ ապրելակերպ, մտածելակերպ,

ավանդույթներ, հեղինակար՝ թարգմանությունը նաև վերածնակերպում է մշակութային ընկալումները:

Հաջորդ տարին՝ 2023 թվականը Ֆրանկֆուրտի գրքի միջազգային ցուցահանդեսի համար առանձնահատուկ տարի է, քանի որ «Frankfurter Buchmesse»-ն տոնելու է իր 75-ամյակը:


8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը


Արտասահմանյան հրատարակչությունների հետ ձեռք բերված նախնական պայմանավորվածությունները կհստակեցվեն 2023 թվականի ընթացքում, իսկ լավագույն հրատարակչական նախագծերը կստանան ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագրի աջակցությունը 2024 թվականի «11002. Թարգմանական ծրագրեր և աջակցություն ստեղծագործողներին ու հետազոտողներին» միջոցառման շրջանակում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Արտասահմանյան հրատարակչությունները 2024 թվականին «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագրի շրջանակում ֆինանսավորում ստանալու համար հայտերը կարող են առցանց ներկայացնել 2023 թվականի հունվարի 1-ից մինչև օգոստոսի 30-ը: Լավագույններին կընտրվի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով ստեղծված մասնագիտական հանձնաժողովը՝ ներկայացված հայտերը քննելիս հաշվի առնելով թարգմանվող գրքի գեղարվեստական արժեքը, դիմող հրատարակչության հեղինակությունը, թարգմանչի պրոֆեսիոնալիզմը: Այս ծրագիրը, որպես գլխադասային մարմին, համակարգում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության մշակութային ժառանգության պահպանության և հանրահռչակման բաժինը, իսկ ֆինանսավորումն իրականացվում է «Հայաստանի ազգային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Արմեն Սարգսյան 

Տաթևիկ Սուքիասյան 

հոկտեմբերի 26, 2022